ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 244 Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՏՈՒՑՈՒՄ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 28/11/2025թ. թիվ 108Լ որոշման կից հավելվածի IX-րդ գլխի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Ստեղծել Եղեգիս համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական ծառայություններ (հատուցում) տրամադրելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սամվել Մարտիրոսյան, համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Հրաչյա Պողոսյան, ավագանու անդամ, հանձնաժողովի նախագահի տեղակալ

Արմեն հակոբյան, առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

Մուրադ Օհանյան, գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Էլիզա Ղարիբյան, առաջատար մասնագետի ժ/պ, հանձնաժողովի անդամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 8 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 245 Ա

21-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 268Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 21-ը նոյեմբերի 2022 թվականի «Եղեգիս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը հաստատելու, Եղեգիս համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 210Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 268Ա որոշման հավելվածի 2-րդ կետում «Արտաշյան Արտաշ» բառերը փոխարինել «Ղարիբյան Էլիզա» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 8 ի Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 246 Ա

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Սվետլանա Բաղդասարի Սահակյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0026-0002, մակերեսը՝ 0,13 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ, Կենտրոնական փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 3 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 12 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 247 Ա

19-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 231Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 19-ը նոյեմբերի 2025 թվականի «Հանգուցյալ Հայրապետ Արսենի Նիկողոսյանի և նրա ընտանիքի անդամ Արմենուհի Վաղարշակի Համբարձումյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին և բնակելի տանը հասցե տրամադրելու մասին» թիվ 231Ա որոշման բովանդակության մեջ «Արմենուհի Վաղարշակի Նիկողոսյանի» բառերը փոխարինել «Արմենուհի Վաղարշակի Համբարձումյանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 19 ք.Եղեգիս